

# ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 5 (49)  
23 հունվար, 2008թ.

## Բարձր տեխնոլոգիական անդրազգային կորպորացիաների մուտքը կնպաստի Հայաստանի մրցունակության բարձրացմանը

*Լիաննա Ավանեսյան. «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն*

*Իսրայելին հաջողվեց դառնալ բարձր տեխնոլոգիաների գերտերություն հստակ կենտրոնացված ռազմավարության շնորհիվ: Դրա կարելու մասն էր կազմում առաջատար տեխնոլոգիական անդրազգային կորպորացիաների նպատակադրված ներգրավումը երկիր, ինչպիսիք են Intel, Siemens, Sony, IBM, Pfizer, Motorola, HP, Philips ընկերությունները:*

Չնայած վերջին մի քանի տարիների գրանցած տնտեսական աճի տպավորիչ ցուցանիշին՝ Հայաստանը դեռևս հանդիսանում է ռեսուրսների շահագործման վրա հիմնված տնտեսություն: Այսօր տնտեսական աճը տեղի է ունենում հիմնականում ի հաշիվ սփյուռքից և արտագնա աշխատողներից ստացվող մասնավոր տրանսֆերտների, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության, ինչպես նաև շինարարության և այն սպասարկող ճյուղերի ակտիվացման: Բացի այդ, Հայաստանի արտահանման կառուցվածքն ունի մեծ կենտրոնացում և ուղղված է սահմանափակ քանակությամբ ցածր ավելացված արժեք ունեցող ռեսուրսափնտեսիվ արտադրանքների արտահանմանը, իսկ օտարերկրյա ներդրումների գերակշիռ մասն իրականացվել են հանքարդյունաբերության և ենթակառուցվածքների բնագավառում: Նման իրավիճակի պահպանումը լուրջ կասկածի տակ է դնում երկրի՝ համաշխարհային շուկայում մրցունակության բարձրացման կարողությունը, և հետևաբար տնտեսական աճի և բարեկեցության բարձրացման հնարավորությունը երկարաժամկետ հեռանկարում: Հաշվի առնելով առկա սահմանափակումները, Հայաստանի նման փոքր երկրի համար մրցունակության բարձրացման և զարգացման հիմնական ուղին արտահանման ուղղվածությամբ տեխնոլոգիատար և գիտատար, բարձր հավելյալ արժեք ստեղծող տնտեսության ճյուղերի զարգացումն է: Իսկ վերջինիս հասնելու ամենարդյունավետ մոտեցումներից է տեխնոլոգիական անդրազգային կորպորացիաների (ԱԿ) բարձր տեխնոլոգիական արտադրական և հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) գործունեությունները երկիր ներգրավումը:

Համաշխարհային շուկայում երկարաժամկետ հատվածում մրցունակ մնալու համար ԱԿ-ները պարտադրված են մշակել և շուկա ներմուծել նոր արտադրանքներն ավելի

արագ և ավելի լավ, քան հիմնական մրցակիցները: Իսկ դա ենթադրում է առավել մեծ ուշադրություն և ծախսեր ՀուՄ վրա: Ջարգացած երկրներում, որոնք ԱԿ-ների ծագման հիմնական երկրներն են, արդեն իսկ նկատվող որակյալ մասնագետների սակավությունը և նրանց բարձր արժեքը ԱԿ-ներին ստիպեցին ինտենսիվորեն փնտրել նոր վայրեր, հատկապես զարգացող և անցումային շրջանի երկրներում՝ իրենց ՀուՄ գործունեությունը տեղաբաշխելու համար: Այս միտումը առավել հատկանշական է տնտեսության տեխնոլոգիատար ճյուղերին՝ պայմանավորված լինելով այս ոլորտում տեխնոլոգիական առաջընթացի աննախադեպ բարձր տեմպերով: Մյուս կողմից, այս գործընթացին նպաստում է նաև այն, որ զարգացող երկրները գիտակցելով բարձր տեխնոլոգիական արտադրությունների իրենց երկրում զարգացման անհրաժեշտությունը և դրանցում ԱԿ-ների դերը, լուրջ քայլեր կատարեցին երկիրը նման ներդրումներ կատարելու համար գրավիչ դարձնելու ուղղությամբ: Դրանք ուղղված էին բարձրակարգ մարդկային կապիտալի, գիտահետազոտական աշխատուժի մատչելության, ներդրումային միջավայրի գրավչության ապահովմանը:

Այս միտումները արդյունավետ կերպով կարողացան օգտագործել տնտեսական զարգացման նախապայմանների առումով (փոքր ներքին շուկա, ռեսուրսների ռազմավարական պաշարների բացակայություն, կրթական ավանդույթներ) Հայաստանի հետ համադրելի այնպիսի երկրներ, ինչպիսիք են մասնավորապես, Իսրայելը և Հունգարիան: Երկու երկրների դեպքում էլ ԱԿ-ներ ներգրավելու հաջողության հիմնական գործոնները բարձրակարգ աշխատուժի ապահովումն էր լայնածավալ կրթական նախաձեռնությունների շնորհիվ, կայուն և արդյունավետ ազգային ինովացիոն համակարգի և ենթակառուցվածքի ստեղծումը, որն իրականացվել է պետության առաջնորդող գործունեությամբ՝ հիմնվելով պետություն, մասնավոր հատված և գիտակրթական համակարգի միջև սերտ և արդյունավետ համագործակցության վրա:

Ներկայումս Իսրայելը բարձր տեխնոլոգիաների ոլորտում նորաստեղծ ընկերությունների քանակով ամենամեծն է աշխարհում: Իր առաջին ներդրումը կատարելուց 30 տարի հետո Intel ընկերությունը հիմնադրման պահին 5, իսկ ներկայումս 5,302 աշխատատեղ է ապահովում Իսրայելում: Իսկ առհասարակ Իսրայելում գործող ընդհանուր օտարերկրյա ՀուՄ կենտրոններում աշխատողների թիվը ներկայումս հասնում է 35,000-ի՝ 10,000 բնակչի հաշվով ապահովելով 140 գիտնականներ և ճարտարագետներ, մինչդեռ ԱՄՆ-ում և Ճապոնիայում այս ցուցանիշը կազմում է ընդամենը 80: Հունգարիայի՝ որպես համաշխարհային խաղացողներին բարդ տեխնոլոգիական լուծումներ առաջարկող և ՀուՄ կենտրոն դառնալու հաջողությունը պայմանավորված էր 90-ականների կեսերից իրականացվող այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են ուսման վարձից ազատելը առաջին մասնագիտական կրթություն ստացողներին, գիտատեխնիկական պարկերի ստեղծումը, վարկերի և այլ ֆինանսական խթանների տրամադրումը «ԲՈՒՀ-մասնավոր հատված» ՀուՄ բնագավառում համագործակցության համար: Հունգարիայի դեպքում մեծ դեր խաղաց նաև նրա մոտիկությունը և մուտքը ԵՄ:

Չնայած Հայաստանի կառավարությունն արդեն ընդունել է 2005-2010թթ.-ի համար ինովացիոն համակարգի ձևավորման ծրագիր, բայց տրամադրված միջոցները շատ փոքր են և դրանց ուղղվածությունը դեռևս ամբողջովին մշակված չէ, մինչդեռ Հունգարիան և Իսրայելը մինչ օրս կիրառում են նորարարությունների խրախուսման բազմաթիվ մեխանիզմներ՝ տրամադրելով զգալի ֆիսկալ և ֆինանսական խթաններ:

Այսպիսով, Հայաստանի մրցունակության հիմնական մարտահրավերներից է դառնալ գրավիչ վայր տեխնոլոգիական ԱԿ-ների բարձր տեխնոլոգիական արտադրական գործունեությունների իրականացման համար, որի հիմնական նախադրյալը յուրահատուկ մարդկային կապիտալի և տնտեսական գործունեության դաշտի ստեղծման միջոցով առանձնահատուկ արժեքային առաջարկի ներկայացումն է համաշխարհային շուկայում: